

# ՈԱՊԱՆՈՒԵՐԵՆ-ՀԱՅԵՐԵՆ ԵՐԿՊԼԱՆԱՑԻՆ (ԶԵՒԱ-ՀՄԱՍՏԱՑԻՆ) ՀԱՄԸՆԿՈՒՄՆԵՐԸ ՈՐՊԵՍ «ՊԱՏԱՀԱԿԱՆ ՆՄԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԻ» ՄԱՍԻՆ ՎԱՐԿԱԾԻ ԲԱՑԱՌՄԱՆ ՓԱՍՏԱԿԱՆ ՀԻՄՔ

Հայ-պոլինեզեան լեզուական առնչութիւնները հայագիտութեան «մաքուր էջերից» են, քանզի երբեւէ լուրջ գիտական ուսումնասիրութեան առարկայ չեն եղել: Դրա պատճառը, թերեւս, աւանդական լեզուաբանութեան մէջ արմատացած այն կարծիքն էր, թէ հնդեւրոպական լեզուաընտանիքին պատկանող հայերէնը համեմատութեան որեւէ եղր չի կարող ունենալ աւստրոնեզիական լեզուաբնտանիքին պատկանող պոլինեզական լեզուների հետ: Լեզուաբնական գիտութեան, ի մասնաւորի՝ համեմատական եւ նոստրատիկ լեզուաբանութեան կողմից ընդունուած արդի չափանիշներով «...ակնյայտ ոչ նոստրատիկ են այնպիսի հնագոյն լեզուաընտանիքներ, ինչպիսիք են հիւսիսկովկասեանը կամ աւստրոնեզիականը: Ակնյայտ է նաև շումերերեն լեզուի ոչ նոստրատիկ բնոյքը<sup>1</sup>: Այդ նոյն չափանիշներով էլ այսօր նոյնպէս ա priori բացառում են հայերէնի եւ պոլինեզական լեզուների, կամ, որ նոյնն է, հնդեւրոպական եւ աւստրոնեզական (մալայա-պոլինեզական) լեզուաընտանիքների) միջեւ հնարաւոր բոլոր ընդհանրութիւնները:

Հը. Աճառեանը եւս, տուրք տալով ժամանակի այս մտայնութեանը, իր տեսադաշտում յայտնուած պոլինեզերէն-հայերէն ակնյայտ համընկումներն անխտիր համարում էր «պատահական նմանութիւններ»<sup>2</sup>: Այս առումով թերեւս կարելի է նման ուսումնասիրութեան նախնական փորձ համարել տողերիս հեղինակի առաջին գիրքը, որտեղ ներկայացւում էին նորայայտ բառային,

1 ԴԵԻԲՈ В. А., ПЕЙРОС И. И., Проблемы изучения отдалённого родства языков, Вестник Российской Академии Наук. Москва 1985, № 2, 55-66.

2 ԱՃԱՌԵՑՆ, ՀՐ., Լիակատար Քերականութիւն հայոց լեզուի, 1-6, Երևան 1953-1971:

քերականական, դիցանուանական եւ այլ ընդհանրութիւններ հայրէնի ու պոլինեզական լեզուների՝ մասնաւորապէս ռապանուերէն (Զատկի կղզի) լեզուի միջեւ<sup>3</sup>: Մեր բազմամեայ հետազօտութիւնների արդիւնքում բացայայտուած ռապանուերէն-հայրէն բառային ընդհանրութիւնների թուաքանակը (ռապանուերէնի բառապաշարի մոտ 50%-ը), ընդգրկման ոլորտը (Կ. Բաքի հնդեւրոպական համանիշների բառարանի բոլոր բառիմաստային (թեմատիկ) խմբերը՝ ներառուալ Գ. Զահուկեանի կողմից յաւելուած «Դերանուանական եւ սպասարկու բառեր ու մասնիկներ» խումբը), լեզուների հիմնական բառապաշարի բաղադրիչ հանդիսացող եւ համարեա չփոխառնուող բառերի (մարմնի որոշ մասերի անուանումներ, գունանուններ, բուսանուններ, սեռ եւ ազգակցական կապեր մատնանշող եզրեր, թուականներ, դերանուններ) ընդհանրութիւնները կամ դժուար են բացատրուամ, կամ առհասարակ չեն տեղաւորում ընդունուած չափանիշների տրամաբանութեան մէջ<sup>4</sup>:

- 
- 3 ՍՏԵՓԱՆԵՍԻՆ, Լ., Հայկական (հետեւրոպական) ենթաշերտ պոլիմեզիական լեզուներում, Երևան 2001:
- 4 ՍՏԵՓԱՆԵՍԻՆ, Լ. Գ., Արհացիթերի հետեւրոպական գիտութիւնների, 1998, N3, 139-147; Պոլիմեզիական լեզուների հետեւրոպական (հայկական) ենթաշերտը, ՀՊՃ տարիկան գիտաժողովի նիւթերի ժողովածու, Երևան 1999, 315-316; Թասայիմ ընթացարուրի մեջն հայերէնի եւ պոլիմեզական լեզուների միջեւ, ՀՀ ԳԱԱ Լրաբեր հասարակական գիտութիւնների, 2000, N2, 147-152; Հայկական (հետեւրոպական) ենթաշերտ պոլիմեզական լեզուներում (յօդուածաշար), Երևան 2001, 104 էջ; Հայարմատ կրկնաւոր բարդուրիւններ ուսապամուերէն (Զատկի կղզի) լեզուում, ՀՊՃ տարիկան գիտաժողովի նիւթերի ժողովածու, Երևան 2001, h. 2, 643-644; Հայկական լեռնաշխարհի նախամշատոցեան ժառանձրուրեան եւ պոլիմեզական ոռնզուուղուող կոչուող գրի հնարաւոր առեջութիւնների մասին, «Մաշտոցեան Դ. ընթերցումներ» գիտաժողովի գեկուցումների հիմնադրոյթներ, Օշական 2002, 51; Պոլիմեզական լեզուների ցա-յոգմակիակերտ մասմիկը եւ նրա հնարաւոր զարգացումները վաղցահայերէնում, «Մաշտոցեան րեկացի» գիտաժողովի գեկուցումների հիմնադրոյթներ, Օշական 2003, 16; Արագած լեռնամուան ծագումնային վերականգնման փորձ, «Արագածածուն. հոգեւոր եւ մշակութային ժառանձրութիւն» յորելանական գիտաժողովի գեկուցումների հիմնադրոյթներ, Օշական 2003, 32; Հայկական լեռնաշխարհը առաջարասիական հնագոյն գրաւոր աղքարմեռում եւ պոլիմեզացիթերի առասպելական նախահայրէմիքը, ՀՀ ԳԱԱ Պատմութեան ինստիտուտի «Հայկական լեռնաշխարհը հայոց եւ համաշխարհային բաղադրամ» հայագիտական առաջին գի-

**Տեղին ենք համարում յիշեցնել, որ դեռեւս ԺԹ. դարի սկզբներին գերմանացի ականաւոր լեզուաբան Ֆ. Բոպը կարծիք էր յայտնել ինդեւրոպական եւ ինդոնեզական լեզուների (իմա՝ հնդեւրոպական եւ աւստրոնեզական լեզուալյնտանիքների) ցեղակցութեան մասին։ Այս կարծիքը, Բոպի մի քանի այլ կանխատեսումների պէս, պատշաճ ուշադրութեան չարժանացաւ եւ յետագյում փաստերով չհիմնաւորուեց<sup>5</sup>:**

**Աւստրոնեզական լեզուներն ուսումնասիրող համեմատաբաններից ոմանք այսօր հաւասարութեան նշան են դնում ինդոնեզական եւ պոլինեզական լեզուախմբերի միջև։ Մասնաւորապէս, լեզուաբան Հանս Կելլերը գրում է հետեւեալը. «Պոլինեզական լեզուներն ըստ էութեան չեն պարունակում ոչինչ, ինչը չկայ ինդոնեզական լեզուներում։ Պոլինեզական լեզուների ոգին մաքուր ինդոնեզական է։ Համընկումները, նոյնիսկ մանրութերում, չափանց մեծարի են, որպէսզի հենարաւոր լիներ դրանք բացատրել հասրակ փոխառութիւնների մասին արուած ենքաղութեամբ... Նս**

տաժողովի գեկուցումների հիմնադրոյթներ, Երեւան 2003, 23-24; Հայկական լեռնաշխարհը առաջաւրասիական հնագոյն գրաւոր աղքակրթերում եւ պոլինեզացիների առասպեկտական հայնահայրենիքը, ՀՀ ԳԱԱ. Պատմութեան ինստիտուտի «Հայկական լեռնաշխարհը հայոց եւ համաշխարհային բաղաբակրութեան բնօրրան» հայագիտական առաջին գիտաժողովի նիւթեր, Երեւան 2004, 85-93; Պոլինեզացիների նախահայրենիքն ըստ տեղանութերի, ՀՀ ԳԱԱ. Պատմութեան ինստիտուտի «Հայկական լեռնաշխարհը հայոց եւ համաշխարհային բաղաբակրութեան բնօրրան» հայագիտական երկրորդ գիտաժողովի գեկուցումների հիմնադրոյթներ, Երեւան 2005, 30-31; Պոլինեզերէմ-հայերէմ ըմբհանրութիւնների հեջիւնական որոշ երեւոյթների հենարաւոր առկայութիւնը նախամաշտոցնեան հայերէմում եւ փաստացի դրսեւորումները գրաքարում, «Մաշտոցնեան է ըմբերցումներ» գիտաժողովի գեկուցումների հիմնադրոյթներ, Օշկան 2005, 44-45; Պոլինեզացիների նախահայրենիքը ըստ տեղանութերի (Pulotu/Polotu-Պուլուսու/Պոլուսու), «Բազմավակյալ», Վենետիկ 2011, N 1-2, 308-328; Խապանուերէմ լեզուի եւ հայերէմի սեռ եւ ազգակցական կապեր մատնանշող եղբերի համադրական ստուգարանութիւն, «Բազմավակյալ», Վենետիկ 2013, N 3-4, 289-310; Հայ-պոլինեզեան լեզուամշակութային բնդիանրութիւններ, Երեւան 2015, 380 էց; Հայերէմ «Քրուր» եւ «մահուուց» բառերի ծագումը, ստուգարանութիւնն ու նախական իմաստը, Վ. Բրիւսովի անուան պետական լեզուասարակագիտական համալսարանի գիտական յօդուածների ժողովածոյ, Երեւան 2017, 180-191:

5 АРАКИН, Д. В., *Индонезийские языки*, М. 1965, 24.

յանգել եմ այն եզրակացութեան, որ այդ երկու լեզուախմբերի միջև չկան էական տարրերութիւններ: Այդ պատճառով «պոլինեզական լեզուներ» եզրը լեզուարանական տեսակէտից արդարացուած չէ, եւ վերշիններս պէտք է միաւորուեն ինդոնեզական լեզուների մէջ»<sup>6</sup>:

Հետեւաբար, եթէ «պոլինեզական լեզուներ» հասկացութիւնն այսօր համարժէք է «ինդոնեզական լեզուներ» հասկացութեանը, ապա, արդիականացնելով Ֆ. Բուփի կարծիքը, բոլոր հիմքերն ունենք նրա ենթադրած հնդեւրոպական եւ ինդոնեզական լեզուների ցեղակցութիւնը վերագրելու հնդեւրոպական եւ պոլինեզական լեզուներին եւս: Մանաւանդ կարեւորում ենք այն փաստը, որ պոլինեզագէտներից ոմանք այդ հանելուկային մշակոյթն ու գիրը նմանեցրել եւ նմանեցնում են Շումերի, Հնդկաստանի, Հին Եգիպտոսի գրերին ու մշակոյթներին եւ գտնում էին, որ պոլինեզացիների առասպելական նախահայրենիքն անհրաժեշտ կին տրամադրել եղիպտոսում կամ Շումերում<sup>7</sup>:

Արդ, ի՞նչ փաստերով կարելի է հիմնաւորել մեր այն տեսակէտը, որ հայերէնի եւ պոլինեզական լեզուների միջեւ բացայացուած համընկումները չեն կարող դիտուել որպէս «պատահական» նմանութիւններ: Ակսենք այն տրամաբանական հարցից, թէ ի վերջոյ ո՞րքան «պատահական նմանութիւններ» կարող են լինել ամենատարբեր լեզուների միջեւ: Հասկանալի պատճառով

6 KÖHLER, H., *Die Stellung der polynesischen Dialekte innerhalb der austronesischen Sprachen.* “Zeitschrift der Deutschen Morgenlandischen Gesellschaft”, 1950, т. 100, 646-658 (տե՛ս Ց. 1959, №1, 147):

7 СТИНГЛ М., *Последний раз*, М., 1975, с. 228. Զեխ ազգագրագէտ, փիլիսոփայական գիտոր, Պրահայի Կառլովի համալսարանի պրոֆեսոր, լրագրող, գրող, հրապարակախոս, հանապարհորդ: Աւարտել է Պրահայի համալսարանի իրաւաբանական ֆակուլտետը, այնուհետեւ ազգագրութեան և բանահիմատրիւմ է ուսաւմնասիրել Կառլովի համալսարանի փիլիսոփայական ֆակուլտետում, 1968թ-ին ստացել է փիլիսոփայական գիտութիւնների գրակտորի աստիճան՝ Հարուային Ամերիկայի արառկան հենցկացիների կրօնին նուիրուած ատեմախոսութեան համար: Ստիմգլը իրականացրել է 40 շուրջերկրեայ հանապարհորդութիւն, որոնց ըմբացքում այցելել է 150 երկր (այդ թւում նաև Հայաստան), ուսամելկ անգամ եղել է նոր Գուիմեայում: Ընտրուել է կիկապու ցեղի պատուաւոր առաջնորդ: Հենինակել է 40 գիրք, որոնք ունեցել են 230 հրատարակութիւն աշխարհի 31 լեզուներով (այդ թւում նաև հայերէնով): 16 միլիոն ընդհանուր տպաքանակով: Ուսումնասիրել է Ովկիամիայի, Ամերիկայի, Աւստրալիայի բնիկների, եսկիմոսների կենցաղն ու մշակոյթը:

(հնչիւնների սահմանափակ քանակ) միանգամայն հնարաւոր է ենթադրել, որ երկու եւ աւելի լեզուներում բոլորովին պատահական զուգակցման արդիւնքում մի քանի բառեր համընկնեն եւ ձեւով (հնչիւնական պլան), եւ նշանակութեամբ (իմաստային պլան): Նման համընկումների սահմանային քանակը, որից յետոյ, լեզուարանների կարծիքով, արդէն դժուար է խօսել պատահական համընկումների մասին, ընդունուած է համարել երկու-երեք տասնեակ բառ: Օրինակ, Վ. Իվանովը եւ Թ. Գամկոնիձեն նշում են, որ երկու եւ աւելի լեզուների միջեւ «...երկպլանային (ձեւափառային) ընդհանրութիւնների բարկանին մեծ ո քուաքանակի (20-30 եւ աւելի քառ) դէքում պատահական համընկումների հաւանականութիւնը գործնականում հաւասար է զրայի եւ, հետեւարար, այդ նմանութեան բացատրութեան համար պահանջուում է մէկ այլ վարկած»<sup>8</sup>:

**Ստորեւ ներկայացւում են արեւելապոլինեզական ռապանուերէն լեզուի եւ հայերէնի միջեւ բացայայտուած որոշ երկպլանային համընկումներ:**

1. **Aaru<sub>1</sub>** (a-aru) «րոնել, խել» – գրաբ. առ (ա՛) «առնելը, գրաւում, յափշտակութիւն, կորպառու, աւար եւլց», որից՝ առնու (առնու) «առնել, գրաւել, նուանել, խել եւլն» (հնիւ. ար- արմատից)<sup>9</sup>,
2. **Aaru<sub>2</sub>** (a-aru) «միացնել բռնակով» – գրաբ. յար (har) «կից, կցուած, կողք-կողդի, միացած» (ինիւ. ար- «կցել, միացնել»), նաեւ առ (ա՛) նախդիր՝ գործիական խնդրով «առընթեր, մերձ, ի մօռյ, կից, յար»<sup>10</sup>,
3. **Aherehere** (a-here-here) «անկայունութիւն, անհաստատութիւն» – գրաբ. երեր (yerer) «տատանում, շարժում», բնիկ հայ բառ՝ կրկնուած եր արմատից,<sup>11</sup> բխեցւում է \*tres- «դողալ, երերալ» արմատից<sup>12</sup>,
4. **Aro** «առշեւի կողմը» – գրաբ. առ- (ա՛-) նախդիր կամ նախադրութիւն, որ զանազան հոլովներով զանազան նշանա-

8 ГАМКРЕЛИДЗЕ, Т., ИВАНОВ, В., *Индоевропейский язык и индоевропейцы*, Тбилиси 1984, с. LXXV.

9 ԱՃԱՐԻԵԱՆ, Հ., Հայերէն արմատական բառարան (յետայսու՝ ՀԱԲ), հ, 1, 247:

10 Նոր բառդիրք հայկագեան լեզուի, 281:

11 ՀԱԲ, հ. 2, 48

12 ԶԱՀՈՒԿԵԱՆ, Գ., Հայերէն սոսուգարամական բառարան, 223:

- Կութիւններ** է ստանում, ինչպէս կողքին, դէպի, դէմը, առցեւը... (Հնիւ. par- ձեւից, որի բունն է \*perə- «առաջի»)<sup>13</sup>,
5. **Akuaku** (aku-aku) «ոգիներ» – գրաբ. **հոգի** (ոգի) (**hoqi**, **voqi**) «հոգի, ոգի, շունչ, ուրուական» (\*rouio-, \*rəu-, \*rau- «վշել, ուռչել»),
  6. **Avai** «ընդմիշտ» – գրաբ. **յաւ** (hav) «վերջ, ծայր» **առանձին անգործածական արժատ** (հնիւ. **rau-** «ծայր»)<sup>14</sup>, որից՝ **յաւէտ** (havet), **յաւիտեան** (havitean) «ընդմիշտ»<sup>15</sup>, **ըստ Գ.** Զահոռկեանի՝ «քերեւս \*raus- «քողնել, բաց քողնել»-ից<sup>16</sup>,
  7. **Avaz** «հեռաւորութիւն», «հեռաւոր» – գրաբ. **յաւ** (hav) «վերջ, ծայր», **առանձին անգործածական արժատ** (Հնիւ. **rau-** «ծայր»)<sup>17</sup>,
  8. **Ati, aati (a-atı), hati<sub>1</sub>, hahati (ha-hati), hatihati (hati-hati)** «կըտրել, կոտրել» – գրաբ. **հատ** (hat) (hat/at) «կտրելը, հատուած, կոտր» **ըստ Հիւբշմանի՝ Հնիւ. pad-** **արժատից**, համեմատեւել է նաեւ (**Մրմագաշեան**) շում. **hat** «այգիները բաժանող նաևապարհները», հաթ. ht, xt, hat, hato հոմանիշների հետ (Jensen)<sup>18</sup>,
  9. **Ati<sub>2</sub>** «վրէժխնդիր լինել», «վրիժառու» – գրաբ. **ատել** (**շսիրել, զզուիլ**) **իմաստով, հնագոյն ձեւն է ատեալ**<sup>19</sup> (\*odi- «ատել» **արժատից**)<sup>20</sup>,
  10. **Ena** «այն» – գրաբ. ն (n) **երրորդ դէմքի մերձաւոր առարկան նշանակող ցուցական յօդ, որի հետ նոյնն է նա այն», այն (ayn) «էն, նա» (հնիւ. no- «այն» դերանունից)<sup>21</sup>,**
  11. **Era** – **ցուցական դերանուն, մատնանշում է խօսողից հեռու գտնուող առարկայ – գրաբ. հեռի (heři) «տեղով կամ ժամանակով հեռու», կազմուած է ի մասնիկով՝ հեռ պարզ արժատից (հնիւ. per-)<sup>22</sup>,**

13 ՀԱԲ, հ. 1, 247:

14 ՀԱԲ, հ. 3, 390:

15 ՆՀԲ, հ. 2, 349:

16 ԶԱՀՈՒԿԵՍՅԱՆ, Գ., Հայերէն ստուգարանական բառարան, 549:

17 ՀԱԲ, հ. 3, 390:

18 ՀԱԲ, հ. 3, 51:

19 ՀԱԲ, հ. 1, 287:

20 ԶԱՀՈՒԿԵՍՅԱՆ, Գ., Հայերէն ստուգարանական բառարան, 82:

21 ՀԱԲ. հ. 3, 416:

22 Անդ, 81:

12. Eriki (te roi) «ნაխაպათრასთელ აბილიქნე» – ყრაფ. ხებეკ (yerek) «ხებელი, ჩრჩლინ» (ხნი. reg<sup>2</sup>os ձեւები)<sup>23</sup>,
  13. Gorogoro (goro-goro) «ქმრტბრალ, խոմქაგბელ» – ყრაფ. գոն (goɪ) «დოჯჩინ, բռუალი ძალა, բղავენց» (թხრეს \*ghor-s' \*gher-ჭუაძაქანა არმათხები)<sup>24</sup>,
  14. Haga<sub>1</sub> «յոգბიტრებინ», «յոգბელ» – ყრაფ. հանգ (hang) «դադար, վերջ», որից հանգչի, հանգիստ, հանգստանալ եւլն (ըստ Գ. Զահուկեանի՝ հաւանաբար կազմուած է հան- նախածանցով \*կւե- «հանգստանալ, հանգիստ վայելել» արմատից)<sup>25</sup>,
  15. Hagu<sub>1</sub> «շնչառութիւն, շնչել» – ყრაფ. հագագ (hagag) «շունչ, առնգանութիւն, շնչափող» (\*րուսio- \*րս «փչել»), տես՝ ყրաբ- հոգի (hogi) փիր. «շունչ» (\*րուսio- \*րս «փչել» արմատից)<sup>26</sup>,
  16. Haite<sub>1</sub> «ուսումնասիրել», «ნախաչել, պարզել, իմանալ», «եկա- րագրել» – ყրա�. յայտ (hayt) «յայտնի, երեւացող, բացորոշ կերպով» (թերեւս \*ai-d- \*ai «այրել, լուսաւորել» արմատից)<sup>27</sup>,
  17. Hana «տաքութիւն, շերմութիւն», «զգալ տաքութիւն», maha- na<sub>2</sub> (ma-hana) «տօք, տաք», «շերմ» – ყրաფ. հուն (hun) «կը- րակ», «արմատ հենց բանի» (\*րսու- արմատից, որ \*րս->հուր- բառի տարբերակն է, որ որոշ լեզուներում առկայ է որպէս ինքնուրոյն հիմք, ուրիշներում՝ որպէս \*րս-ի հոլովական հիմքի տարբերակ՝ ըստ \*ր/ռ հերթագայութեան)<sup>28</sup>,
  18. Hariu<sub>2</sub> «նայել ծուռ, թե՛, խրամնակօրէն», արև «նայել ինչ-որ մէկին» – ყրաֆ. յառել (hařel) «յառել, մնկել, սեւեռել, ան- քի-իր նայել» (թხրես յ- նախածանցով \*ar-s- \*ar- «յարմարեց- նել, կապել» արմատից),<sup>29</sup>
  19. Haro<sub>2</sub> «զարդարել» – ყրաֆ. արդ (harpə, յարդ, զարդ) (ard, hard, yard, zard), որոնցից՝ յարդարել «ուղղել, կանոնաւորել, կարգաւորել», զարդ «զարդ» (հնի. ar- արմատից)<sup>30</sup>, նոյնա- ծագում բառ է նաեւ ყրաֆ. յարմար (harmar) «պատշաճ, վա- յել, վայելուչ» բառը (հնի. ar- արմատից)<sup>31</sup>,

23 ζυρ. h. 2, 45:

24 ԶԱՀՈՒԿԵԱՆ, Գ., Հայերէն ստուգաբանական բառարան, 168:

25 УГН, 445:

26 ԱՐԴ, 437:

27 ԱՐԴ, 547:

28 **ԱՐԵՆ**, 468:

29 **ԱՐԴ**, 548:

30 ΣΥΡ, h. 1

31 ΣΥΡ, h. 3, 389:

20. **Haus** «հով, սիւխ» – գրաբ. հով (hov) «հով, հովանի, քամի» (\*pou- \*p(h)u- «փշել, ուռչել» *արմատից*)<sup>32</sup>,
21. **Henua** «արգանդ, որովայն» – գրաբ. հան (han) «մայր հօրն կամ մօր», «տատ, մնձ մայր» (\*an- «նախնի՝ նախահայր կամ նախամայր» *արմատից*)<sup>33</sup>,
22. **Herohero** (hero-hero) «պայծառ, կարմիր» – գրաբ. հուր (hur) «հուր, կրակ» (\*pur- \*peuor- \*pun- «կրակ» *արմատից*)<sup>34</sup>,
23. **Here**, «խիել, մտրակել» – գրաբ. հար (har) «զարնել, խիել» (\*per- «խիել, զարկել» *արմատից*)<sup>35</sup>,
24. **Higaa** (higa-a) «ըշուառ, ողորմնելի» – գրաբ. հեգ (heg) «հեգ, խեղի» (*թերեւս* \*reiu- \*pe(i)- «ցաւացնել, վնասել, նախատել» *արմատից*)<sup>36</sup>, *տե՛ս նաեւ գրաբ. հեղդ* (heg) «ծուլացող, դանդաղաշարժ» (\*selk- «Քաշել» *արմատից*)<sup>37</sup>,
25. **Hinihini** (hini-hini) «հնագոյն, հնամենի» – գրաբ. հին (hin) «հին» (*բնիկ հ.-ե. \*seno-* «հին» *արմատից*)<sup>38</sup>,
26. **Hiri**, «հիւսել (մազերը, պարան)» – գրաբ. յիրել (hirel) «միացնել, շարել» (*թերեւս* \*ser- «շարել, միացնել» *արմատից*)<sup>39</sup>, *յեն* (her) «իրար կողքի շարուած, ընդելուզուած» (\*ser-s- \*ser- «շարել» *արմատից*)<sup>40</sup>, *հեր* (her) «գլխի մազ» (*ըստ Գ. Զահուկեանի՝ հազիւ թէ կապ ունենայ հ.-ե. \*ser-* «իրար կողքի շարել, կցել» *արմատի հետ*)<sup>41</sup>,
27. **Hiro**, «ոլորել, պտուել», *նաեւ huri* «շրջուել», «փարաբուել, ոլորուել, կծկուել» – գրաբ. հիր (hir) «պտոյտ, շրջան, գալար» (*թերեւս* \*per-s- \*sper- «պտուել, շրջել» *արմատից*)<sup>42</sup>,
28. **Hirohiro** (hiro-hiro) «խառնել», «լուծել» – րրբ. (Ար., Ղրբ.) *հար-* (har-) «հարել» *բայի արմատը, տես՝ խնցի հարել* (\*per- «խիել, զարկել»)<sup>43</sup>,

32 ԶԱՀՈՒԿԵՍՆ, Գ., Հայերէն ստուգարանական բառարան, 466:

33 Անդ, 444:

34 Անդ, 468:

35 Անդ, 450:

36 Անդ, 459:

37 Անդ, 456:

38 Անդ, 461:

39 Անդ, 553:

40 Անդ, 552:

41 Անդ, 458:

42 Նոյն տեղում:

29. **Hori** «լինել հակապատկեր, թշնամի» – գրաբ. հեռ (heř) «հակուակութիւն, ոխ, կոիւ» (հնիւ. ers- արմատից),<sup>44</sup> տես նաեւ գրաբ. յոռ- (hoř-) «վատ, գիշ» (թերեւս \*ors` \*eres- «անքարեացակամութիւն» արմատից, որից բխեցւում է հեռ. «հակուակութիւն, ոխ, կոիւ» բառը)<sup>45</sup>,
30. **Huri<sub>2</sub>** «ձագարափոս» – գրաբ. հոր (hor) «ջրհոր, խոր փոս» (թերեւս` \*poro-` \*por- «անցկացնել, անցնել» արմատից)<sup>46</sup>,
31. **Huri<sub>3</sub>** «շպրտել, նետել», «կրակել» – գրաբ. հար (har) «զարնել, խփել», կտր. հարի (hari) հեց. «նետ արձակել, զարնել» (\*per- «խփել, զարկել» արմատից)<sup>47</sup>,
32. **Hurihuri<sub>1</sub>** (huri-huri) «զայրոյթ» – գրաբ. հեռ (heř) «հակառակութիւն, գժոտութիւն, կոիւ, ոխ» (\*hers- «յուզել» արմատից)<sup>48</sup>,
33. **Hoki<sub>1</sub>** «փ՞նչ» – գրաբ. հի (hi), որից՝ հի'կէն (hiken) «փ'նչպէս, ո՛րպէս» (<նիւ. զու- հարցական դերանունից)<sup>49</sup>,
34. **Horo<sub>1</sub>, horohoro<sub>1</sub>** «ուտել ագահարպ» – գրաբ. յոյր/յօր/յով (hor) «յոյր, գէր, հաստ, թաւ, թանձը» (\*pei-ro-` \*pei- «պարարտ լինել, լիքը լինել» արմատից)<sup>50</sup>,
35. **Ka<sub>3</sub>** «արեւածագ», kas «վառել, բռբռնել», kais «լինել կարմիր (արեւի մասին՝ խաւարման ժամանակ)», karera «փայլել», «վառել լոյսը» – գրաբ. կառ (kař) «վառում, վառելը» (ծագումն անյայտ է, Գ. Ջահուկեանի կարծիքով՝ հազիւ թէ հ.-ի. որեւէ լեզուի միջոցով գայ \*ker- «այրել, վառուել, տաքացնել»-ից)<sup>51</sup>,
36. **Kai<sub>4</sub>** «ուտել» – գրաբ. կեր (ker) «ուտելիք, կերակուր» (\*g<sup>u</sup>er- «կլանել, ուտել» արմատից)<sup>52</sup>,
37. **Kakari<sub>2</sub>** (ka-kari) «լինել կարիքի մէջ», «աղբատ» – գրաբ. կար (kar) «կարիք» (թերեւս \*g<sup>u</sup>ori-`\*g<sup>u</sup>er- «ծանր» արմատից)<sup>53</sup>,

43 ԶԱՀՈՒԿԵԱՆ, Գ., Հայերէն ստուգարամական բառարան, 820:

44 ՀԱԲ, հ. 3, 81:

45 ԶԱՀՈՒԿԵԱՆ, Գ., Հայերէն ստուգարամական բառարան, 555:

46 Անդ, 466:

47 Անդ, 450:

48 Անդ, 457:

49 ՀԱԲ, հ. 2, 235:

50 ԶԱՀՈՒԿԵԱՆ, Գ., Հայերէն ստուգարամական բառարան, 555:

51 Անդ, 386:

52 Անդ, 400:

53 Անդ, 390:

38. **Kata** «ծիծաղել», «ծիծաղ» – գրաբ. կատակ (katak) «խաղ, ծաղը, այլպանի», «ծաղրածու, խեղկատակ» (հնիս. g<sup>2</sup>ad- արմատից՝ տից)<sup>54</sup>,
39. **Kato<sub>1</sub>** «կտրել, շարդել (թիւղերը)» – գրաբ. կոտոր (kotor) «կլոտոր» (լսու Գ. Զահոռէկեանի՝ «Հազիւ թէ \*s)ker-t- արմատից ծագող որեւէ աղբիւրից՝ \*-rt-ի ըրջմամբ (կամ, թերեւս, \*s)keu-t- «կտրել» արմատից))<sup>55</sup>,
40. **Kekereli** (ke-keri) «ողբ, աղաղակ» – գրաբ. կերկերի (kerkeril) «կոկորդը չորանիալ, ճայնը կտրուիլ», «խոպուել» (թերեւս կրկնաւոր կազմութիւն՝ \*ger- «խոպու կանչել» արմատից)<sup>56</sup>,
41. **Kero** «քեֆ(ու)ել, ծալ(ուել» – գրաբ. կեռ (ker) «ծուռ, կեռ, նանկ» (\*ger-s- \*ger- «պտտել, ոլորել» արմատից)<sup>57</sup>,
42. **Ketu<sub>1</sub>, keetu** «ցատկել» – գրաբ. կայթ (kayt) «ցատկուում, ուրախութեան պար» (Գ. Զահոռէկեանը քիչ հաւանական է համարում ծագումը \*goi-ti-ից՝ \*gei- «երգել, կանչել» արմատից, առաւել հաւանական է համարում կապը՝ կ/խ հերթագայութեամբ, խայտալ բայի հետ)՝<sup>58</sup>,
43. **Kite<sub>2</sub>** «տեսնել, նկատել», «իմանալ» – գրաբ. գետ/գիտ (get/git) «իմացող, գիտակ» (\*ueid-/\*uoid- «տեսնել, գիտենալ»)<sup>59</sup>,
44. **Kino** «վատ, չար» – գրաբ. քէն (k'en) «ոխ, վրէժ, նախանձ» (\*kuoinā- «պատիժ, վրէժ, յանցանիքի բաւութեան համար նշանակուած գին» արմատից)<sup>60</sup>,
45. **Kore** «չ», «չհերիքել», **kori<sub>2</sub>** «չունենալ», «առանց», «չլինել», «պակասել», «բացակայել», «դատարկութիւն» – գրաբ. կոր (kor) «կորուստ, փչացում» (լսու Գ. Զահոռէկեանի՝ հազիւ թէ կապ ունենայ հ.-ե. \*g<sup>u</sup>er- «կլանել, կոկորդ, անդունի» արմատից՝ հետ)՝<sup>61</sup>,
46. **Kotokoto** (**koto-koto**) «արիւնագեղում», «արիւնահոսութիւն» – գրաբ. կար (kat'), բրբ. (Ագուլիս) կօր (kot'), կօր կօր (ko'kot')

54 ՀԱԲ, հ. 2, 535:

55 ԶԱՀՈՒԿԵՍԻՆ, Գ., Հայերէն սոուզարանական բառարան, 422:

56 Անդ, 401:

57 Անդ, 400:

58 Անդ, 380:

59 Անդ, 160:

60 Անդ, 782:

61 Անդ, 820:

«կաքիլ, շիք» (թերեւս բնիկ հ.-ե.՝ \*ցւտ-՝ \*ցւտ- «կաքել արմատից»),<sup>62</sup>

47. **Korokoro<sub>1</sub>** (koro-koro) hua «տարեց մարդ» – գրաբ. կոր (kor) «ծուռ, ծռուած», որից՝ կոր ի կոր (kor i kor) կամ կորակոր (korakor) «կորագլուխ» (լսու Գ. Զահուկեանի՝ \*gor-՝ \*ger- «պտտել, ոլորել» արմատից. Քիչ հաւանական է համարում բխեցումը \*gou-ero-ից կամ \*goցո-ից՝ \*geu- «ծռել, թեթել, կամաք կազմել» արմատից, որն առաջարկում էր Յ. Պոկոռնին)<sup>63</sup>,
48. **Kura<sub>2</sub>** «լաւագոյն, լնտիր» – գրաբ. գեր «վեր, բարձր, աւելի քան» (\*uer- «բարձրացնել» արմատից),<sup>64</sup>
49. **Manə<sub>3</sub>** «մնալ» – գրաբ. մնալ (mənal) «մնալ» (\*menā-՝ \*mēn- «մնալ» արմատից. հ. հնդկ. man- «յապաղել, հանգիստ մնալ», լատ. maneo «մնալ»)<sup>65</sup>,
50. **Mata<sub>3</sub>** «կանաչ», «տիհա», mata<sub>9</sub> «պտուղ, սաղմ», տոնիգա mata «կանաչ», «խակ մրգեր», սամոս moto «կանաչ», «տիհա», մառի mata «քարմ բոյսեր» – գրաբ. մատաղ (matał) «մատաղ, մատղաշ, մանուկ» (\*mad- «քաց, խոնաւ, կաքել, հիւթեղ» արմատից)<sup>66</sup>,
51. **Matu** «պատրաստ լինել գնալու ինչ-որ տեղ», «գնանք» – գրաբ. մատ (mat) «մօս կամ առաջ երթալ, տանիլ», «մօս, մօնեցում, մերձնեցում» (\*mad- արմատից: Աճառեանը տալիս է \*mād-նախաձեւ), ինչպէս նաեւ գրաբ. մատ (mota) «մօս, մօտիկ»),<sup>67</sup>
52. **Motihō** (motiho) «մքնել» – գրաբ. մութ (mut) «մութ, մբութին» (թերեւս \*meut-՝ \*meu- «խոնաւ, կեղտոս, կեղտունել» արմատից)<sup>68</sup>,
53. **Mooku** (mo-oku), **maaku** (ma-aku) «իմ», «ինձ», «ինձ համար» – գրաբ. մեք (meq) «մենք» (\*mes «մենք» արմատից)<sup>69</sup>,

62 ԶԱՀՈՒԵՐԻՆ, Գ., Հայերէն սոուգարանական բառարան, 371:

63 Անդ, 422:

64 Անդ, 156:

65 Անդ, 530:

66 Անդ, 513:

67 Անդ, 512:

68 Անդ, 536:

69 Անդ, 524:

54. **Morore** «արտամուսնական զաւակ» – գրաբ. մօրու/մարու (տօր) «խորք մայր» (\*mātruyā-` \*māter- «մայր» ձեւից),
55. **Mutu** «լուսկեաց», «յամբ» – գրաբ. մուտ (տս՛) «լուռ ու մունջ լսող» (**բիեցլում** է հնիւ. տս- արմատից)<sup>70</sup>,
56. **Mutu** «լուսնային ամսուայ 30-րդ օրանունը» – գրաբ-մութ/մութ(ն) (mut'/mut'(n)) «մութ» (թերեւս \*meut- \*meūt- «խոնաւ, կեղտոտ, կեղտոտել» արմատից. հմտ. Հ. իուլ. Motheg «մութ»), համեմատելի է հին հայոց տոմարի 30-րդ օրանուան՝ «Գիշերավար» բառի հետ: Հայերէն գիշերավար (g-sheravar) բառը կազմուած է «գիշեր» (gisher) եւ «վար» (var) արմատներով, որոնցից առաջինը համազօր է «մութ»-, «օրուայ անլայս կէսը» բառին եւ համեմատելի է ռապանուերէն տսու «լուսնային ամսուայ 30-րդ օրանունը» բառի հետ: Բառի երկրորդ՝ «վար» արմատը կարելի է հասկանալ որպէս վարող «Քշող, տանող», «վանող»: Ըստ այդմ՝ գիշերավար կը նշանակի «գիշերը (մութը) Քշող, տանող», «վանող»: Մեկնաբանութիւնը համոզիչ է թեում, մանաւանդ եթէ յիշենք, որ Արուսեակ (Լուսարեր, Այգարեր) մոլորակը երբեմն կոչւում է Գիշերավար:
57. **Na<sub>2</sub>,oona** (o-onə) «ումն, ինչ-որ մէկը», «նրա», «նրան» – գրաբ. ն- (n-) երրորդ դէմքի ցուցական արմատ, բաղադրութիւններ՝ նա, ան (na, an) «նա», «այն» (\*e)no- արմատից. տես Հ. հնդկ. \*ana, ալ. ana, գոր. jains, լիտվ. anas, ռուս. он),
58. **Nenenene** (nene-nene) «ներքին օրգաններ, աղիքներ» – գրաբ-ներ (ner), րրը. նէ (ne), նի (ni) «ներս, մէջը, տակ»<sup>71</sup> (\*e)nero- «ներքին», այլեւ, թերեւս, \*ner- «տակ» արմատից)<sup>72</sup>,
59. **Nua<sub>1</sub>**, nua hine, nue hine (արի). «տարեց կին, հարս, տալ» – գրաբ. նու (nu) (արի). «հարս (փեսայի ծնողների եւ հարազատների համար») (\*snuso հիմքից. հմմա. հ. հնդկ. snusa, յուն. νυός, լատ. nurus, հ. վ. գ. snur, ռուս. сноха)<sup>73</sup>,
60. **Ono<sub>2</sub>** «հարուստ» – գրաբ. ոյն (ստ) «կարողութիւն» (հնիւ. ծր- «քանել, ձեռք բերել» արմատից, որ աճած է -ո- աճականով)<sup>74</sup>,

70 ՀԱԲ:

71 Ըստ այդմ՝ այն պէտք է ստուգարանուի որպէս (ne-ne-ne-ne) կազմութիւն:

72 ԶԱՀՈՒԿԵՍՆ, Գ., Հայերէն ստուգարանական բառարան, 566:

73 Անդ, 572:

74 ՀԱԲ, հ. 3, 602:

61. Ote «ծծել» – գրաբ. ուտել (utel), բրբ. (Ղըր.) օտել (otel) «ուտել» (հնիւ. օձ արմատից)<sup>75</sup>,
62. Otea «պար, որ պարում են ութ տղայ եւ ութ աղջիկ» – գրաբ. ութ (ut), բրբ. (Ղըր.) օթ (ot') «ութը» (Հնիւ. օկ'տօ ձեւից)<sup>76</sup>,
63. Ootu (o-otu) «կազմել, միակցել, ստեղծել» – գրաբ. յոդ (hod) ա) «մարմնի անդամների կապը», բ) «քերականական յոդ», ուրիշ՝ յոդել «կապել, կազմել, յարմարել, պատշաճնեցնել» (Հնիւ. au-dh-ձեւից, որ աճած է աս-կամ ես-«հագնիլ, հիւսել, մանել», բայց նաեւ «կապել» արմատից՝ ձի աճականով)<sup>77</sup>,
64. Parei «փայլել (աչքերի մասին)» – գրաբ. փարփառ (p'arg'ar) «վառվուն աչքեր ունեցող», կրկնաւոր կազմութիւն \*փառ «փայլ» արմատից<sup>78</sup>, նաեւ փայլ (p'ayl) «փայլ» (\*sphel- \*phel- «փայլել» արմատից)<sup>79</sup>,
65. Poki «երեխայ», «որդի», «դուստր», «զարմիկ» – գրաբ. փոքր (p'ok'r), սեռ. Հոլով՝ փոքր (p'ok'u), բցու. փոքրէ, յգն. փոքրնեն, սեռ. փոքրնեց «պստիկ, ֆիչ» (ըստ Աճառեանի՝ «քմիկ հայ բառ՝ Հնիւ. բհկու-ձեւից, որ տուել է հյ. \*փուքու, տարանմանութեամբ փուքու, որից փոքր: Հնիւ. արմատն է pok, rou, րս «փոքր, ֆիչ»)<sup>80</sup>, ըստ Գ. Զահուկեանի՝ \*phukku- \*pok- «փոքր» արմատից<sup>81</sup>,
66. Rere «գնալ մի կողմ», rerarera (rera-rera) «ծովի մակերեւոյթ», hirihiri (hiri-hiri) «հօնում, տատանում» – գրաբ. եր (yer) պարզական արմատ, որից՝ երեր (yerer) «տատանում, շարժում» (բխեցւում է Հնիւ. ter-ից)<sup>82</sup>,
67. Ta «այդ» – գրաբ. դա (da), բրբ. տա (ta) «այդ» (\*to- ցուցական հիմք՝ ենթարկուած 2-րդ դէմքի դու-ի ազդեցութեանը եւ ա-ով դարձած այդ դէմքի ցուցական դերանուն)՝<sup>83</sup>,
68. Tai «ծով, ովկիանոս» – գրաբ. քան «ապուր» (\*tā-ni-՝ \*tā- «հալչել, հնսել» արմատից), քանալ (t'anal) «քրջել» (\*tā-n-՝ \*tā-

75 ՀԱԲ, հ. 3, 612:

76 Անդ, հ. 3, 590:

77 Անդ, հ. 3, 412:

78 ԶԱՀՈՒԿԵԱՆ, Գ., Հայերէմ ստուգարամական բառարան, 761:

79 Անդ, 757:

80 ՀԱԲ, հ. 4, 530:

81 ԶԱՀՈՒԿԵԱՆ, Գ., Հայերէմ ստուգարամական բառարան, 769:

82 ՀԱԲ, հ. 2, 48:

83 ԶԱՀՈՒԿԵԱՆ, Գ., Հայերէմ ստուգարամական բառարան, 179:

- «հալչել» արմատից)<sup>84</sup>, բաւթ/թօն (t'on) «անձրև» (\*tap-ni-` \*tar-
- արմատից)<sup>85</sup>,
69. Tao «ամուսնու քյորը» – գրաբ. տալ (tal) «ամուսնու քյորը» (\*gələn- արմատից)<sup>86</sup>,
70. Tatao (ta-tao) «խորհրդանշան» – գրաբ. բաւ (t'aw) «խուլ շընի-չեղ (հնչիւն)» (\*touo-` \*teu- «ուռչել» արմատից)<sup>87</sup>, Անառեանի մօս՝ բաւ «խուլ շնչեղ (տառ կամ ձայն)», Հնիւ. teu-, tewə-, tu- «ուռչել, մեծնալ»-ից<sup>88</sup>,
71. Taus «տարի, դարաշրջան» – գրաբ. տիւ (tiv) «ցերեկ, օրուայ լոյս մասը» (\*deu-` \*dei- «շողալ, փայլել» արմատից)<sup>89</sup>,
72. Tara<sub>3</sub> «տեղ» – գրաբ. բառ (t'ař) «քառելու տեղ, պտուղ կախելու ձև» (\*trs-` \*ters- «չորանալ» արմատի ձայնարձային ձեւ)<sup>90</sup>,
73. Taropa (ta-ropa) «կողով» – գրաբ. բարփ/թ (t'arph/b) «ձկնորսական կողով, ուռկան» (\*trp(h)- \*tuer- «քոնել, ցանկապատել» արմատից)<sup>91</sup>,
74. Taviri (ta-viri) «քանալի», «շուռ գալ, շրջուել, պտտուել», taviri tavara «պտոյն գալ, բոլորածիր պտտուել» – գրաբ. բաւալ (t'aval) «քառալում, գլորում» (Ըստ Գ. Զահուկեանի՝ թերեւս \*tap- «սեղմել» արմատից)<sup>92</sup>,
75. Tetu «մեծ» – գրաբ. տի (ti) «տարիք, հասակ» (հնիւ. \*dit- կամ \*diti- ձեւից)<sup>93</sup>,
76. Tiaki «նեղեն», ակօսել ալիքները» – գրաբ. թի (ti) «նաւ վարելու կամ հող բափելու թի», որից՝ թիսկ (t'iak) «նաւի թի» (Հնիւ. \*ptio- ձեւից)<sup>94</sup>,
77. Toke<sub>3</sub>, toke rau «տարուայ եղանակ» – 1. գրաբ. տոկ (tok) «սոսկալ տեսելը», «երկար տեսղութեամբ, շատ» (հնիւ. \*dowə- ալ-

84 ԶԱՀՈՒԿԵԱՆ, Գ., Հայերէն ստուգարամական բառարան, 257:

85 Անդ, 261:

86 Անդ, 717:

87 Անդ, 261:

88 ՀԱԲ, հ.2, 163:

89 ԶԱՀՈՒԿԵԱՆ, Գ., Հայերէն ստուգարամական բառարան, 730:

90 Անդ, 258:

91 Անդ, 261:

92 Անդ, 261:

93 ՀԱԲ, հ. 4, 403:

94 Անդ, հ. 2, 181:

- մատից, որի \*dowə ձեւից ունենք տեսել), 2. toke rau te papa-kina «հիւսիսային բամու անուանում», toke rau ruhi a Oogo «հարաւային բամու անուանում» – գրաբ. տոկ 2. (tok) «յաջողակ, ուժեղ, լաւ փշող (բամից)» (հնիւ. \*dowə-ից),*
78. **Toro** «ծառ» – գրաբ. տոռն (točn) «սանդի կոր» (հնիւ. doru-«փայտ» ձեւից)<sup>95</sup>,
79. **Tou, taau** «fn» – գրաբ. դու (du), բրբ. տու (tu) «դու» (\*տարմատից՝ տի ձայնեղացմամբ)<sup>96</sup>,
80. **Toutou** (tou-tou) «քաւ, խիտ (րոյսերի, ծառերի մասին)» – գրաբ. թաւ(t'av), որից՝ թաթաւ (t'a't'av) «քանձը, խիտ (ծառի, անտառի համար ասուած)», (բնիկ հայ բառ՝ հնիւ. \*teu-, \*tewa, \*tu- «ուռիլ, ուռչիլ, մնծնալ» արմատից)<sup>97</sup>,
81. **Toku, tooku** «իմ» – գրաբ. դուք (duq) «դուք», դու (du) *անձնական դերանուան* (\*տարմատից) յոդնակի թիւը,
82. **Turu** «ծառ, բողբօց, ոստ» – գրաբ. թուփ (t'up') «կարճ՝ ցած ծառ», «քաւ ոստ, տերեւալից նիւղ» (հնիւ. turpho- ձեւից)<sup>98</sup>,
83. **Turi<sub>2</sub>** «ծունկ, յօդ» – գրաբ. թիւր (t'yur) «թիւր, ծուռ» (թերեւս բնիկ հ.-ե.՝ \*tek-ro- \*tek- արմատից, որտեղից՝ թեֆել)<sup>99</sup>,
84. **Turuturu** (turu-turu) «կար-կար թափել (շուրը, հեղուկը)» – գրաբ. թոռ (t'or) «հնոսում, հնուք, հնոսել, կարում», որից թորել/թուրել (t'orel/t'urel), թոռթորել (t'ort'rel), բխեցւում է «\*(s)ter- «անմաքուր հեղուկ» արմատից, որտեղից նաև՝ թրիք, թուրմ, թարախ, թուրջ, թոռ «թաց, խոնաւ...»<sup>100</sup>, արեւմտապոլինեզական տոնդա եւ սամոս լեզուներում, որտեղ մասնակիորէն տեղի ունի թ/ հերթագայութիւն, այն հնչում է որպէս tulu, tulutulu, որոնք տառացիօրէն նոյնանում են հայ բրբ. թուրուր (t'ulur), թուրու (t'ulul), թուրութուրու (t'ulult'ulul) լիմել/լիմենել/զալ «գլորուել» բառերի հետ<sup>101</sup>,
85. **Uira** (ui-ra) «կայծակ» – գրաբ. հուր (hur) «հուր, կրակ» (\*պւր- \*պւուր-, \*պոն- «կրակ» արմատից)<sup>102</sup>,

95 ՀԱԲ, հ. 4, 421:

96 ԶԱՀՈՒԿԵՍՆ, Գ., Հայերէն ստուգարանական բառարան, 203:

97 ՀԱԲ, հ. 2, 163:

98 Անդ, հ. 2, 211:

99 ԶԱՀՈՒԿԵՍՆ, Գ., Հայերէն ստուգարանական բառարան, 268:

100 Անդ, 272:

101 Հայոց լեզուի բարրառային բառարան, հ. 2, 141:

102 ԶԱՀՈՒԿԵՍՆ, Գ., Հայերէն ստուգարանական բառարան, 468:

86. Սոսու «խմել, խմիչք» – գրաբ. ռումփ (ump), որից՝ ըմպել (Յոմբէլ) «խմել» (ընդ + \*pi-be` (կրկնաւոր՝ \*poi-pi- «խմել, ըմպել») արմատից)<sup>103</sup>,
87. Սոսսու (սոսուսո) «տաքանալ կրակի մօս, արեւի տակ» – գրաբ. հում (hum) «կրակ» (\*run- արմատից, որ \*pur->հուր բառի տարբերակն է, որ որոշ լեզուներում առկայ է որպէս ինքնուրոյն հիմք, ուրիշներում՝ որպէս \*pur-ի հոլովական հիմքի տարբերակ՝ ըստ \*t/n հերթագայութեան)<sup>104</sup>,
88. Սոսու «զետնափոր վառարանում եփուած ուտելիք» – գրաբ. հում (hum) «չեփած, անեփ» (հնի. omo-),
89. Vera «տաք, կրակ, բոց, տաքութիւն» – գրաբ. վառ (var) «վառ, վառուող, փայլում» (փոխադրութիւն հ.-ե. \*սեր- «վառել» արմատի ածանցեալներից որեւէ մէկից, թերեւս յատկապէս խեթերէնից)<sup>105</sup>,
90. Viri<sub>2</sub> «ընկնել բարձրութիւնից, գլորուել ներքնւ» – գրաբ. վեր (ver) «վեր», բաղադրութիւն՝ վերուստ (\*upper- «վեր, վրայ» արմատից)<sup>106</sup> եւ այլն:

Կարծում ենք, որ բերուած օրինակներն առաւել քան բաւական են ցոյց տալու համար, որ ռապանուերէն-հայերէն բառային զուգահեռներն անհնար է դասել «պատահական համընկումների» թուին:

Ուշադրութեան արժանի է այն, որ որոշ ռապանուերէն-հայերէն բառային զուգահեռներ հնչիւնական եւ իմաստային տեսակէտից առաւել սերտ մերձակցութիւն են դրսեւորում, համեմատած դրանց վերականգնուած հ.-ե. նախաճների հետ: Համեմատենք, օրինակ ռապ. hati<sub>1</sub>, hatihati (hati-hati) «կտրել, կոտրել» – գրաբ. հատ (hat/at) «կտրելը, հատուած, կոտր» (հնի. pad-), ռապ. ati<sub>2</sub> «վրեժինդիր լինել», «վրիժառու» – գրաբ. ատել (atel) «չսիրել, զգուիլ» (\*odi-), ռապ. eriki (te roi) «նախապատրաստել անկողինը» – գրաբ. երեկ (yerek) «երեկոյ, իրիկուն» (հնի. reg<sup>2</sup>os), ռապ. gorogoro (goro-goro) «փնրփնրալ, խոմփացնել» – գրաբ. գոր (gor) «գոչիւն, բոռալու ճայն» (\*ghor-s \*gher-), ռապ. hagu<sub>1</sub> «շնչա-

103 Անդ, 247:

104 Անդ, 468:

105 Անդ, 704:

106 Անդ, 709:

ուութիւն, շնչել» – գրաբ. հազագ (hagag), արմատը՝ հագ (hag) «շունչ, առողանութիւն» (\*rouiiο-՝ \*pu «փշել»), ռապ. հաս, «հնվ, սիւք» – գրաբ. հով (hov) «հնվ, հովանի, քամի» (\*rou-՝ \*p(h)u-«փշել, ուոչել»), ռապ. հինինի (hini-hini) «հնագոյն, հնամննի» – գրաբ. հին (hin) «հին» (\*seno- «հին»), ռապ. հիրօ «ոլորել, պըտնել», նաեւ հրի «շըզուել», «փաք-աք-ուել, ոլորուել, կծկուել» – գրաբ. հիր (hir) «պտոյտ, շրջան, գալար» (\*per-s-՝ \*sper- «պտտել, շրջել»), ռապ. kite<sub>2</sub> «տեսնել, նկատել», «իմանալ» – գրաբ. գէտ/գիտ (get/git) «իմացող, գիտակ» (\*ueid-/\*uoid- «տեսնել, գիտենալ»), ռապ. tara<sub>2</sub> «տեղ» – գրաբ. քառ (tār) «քառելու տեղ» (\*trs-՝ \*ters- «չորանալ»), ռապ. tao «ամուսնու բոյրը» – գրաբ. տալ (tal) «ամուսնու բոյրը» (\*gələðu-), ռապ. kakari<sub>2</sub> (ka-kari) «կինել կարիքի մէջ», «աղ-քատ» – գրաբ. կար (kar) «կարիք» (\*g<sup>u</sup>ori-՝ \*g<sup>u</sup>er- «ծանր») եւ այլն:

Հարկ է նշել նաեւ, որ ռապանուերէն-հայերէն բառային զուգահեռների մէջ անհամեմատ աւելի շատ են հայերէնում անյայտ ծագման, փոխառութիւն համարուող, նաեւ բարբառային բառերը, որոնք կա'մ տառացիօրէն նոյնական են ռապանուերէն բառերին, կա'մ օրինաչափ հնչիւնափոխութիւնների արդիւնք են: Առաւել եւս անհնար է «պատահական համընկումների» տեսակէտով բացատրել 100-ից աւելի այն երկպանային համընկումները, որոնք առկայ են ռապանուերէնի եւ հայերէնի բարբառային ձեւերի, անյայտ ծագման եւ տարբեր լեզուներից փոխառութիւն համարուող բառերի միջեւ: Առայժմ մի կողմ թողնելով փոխառութիւնների հարցը, բերենք բարբառային եւ անյայտ ծագման բառերի երկպանային համընկումների օրինակներ:

1. Aati<sub>3</sub> (a-at) «նմանուել, նմանակել» – գրաբ. յատուկ (hatuk) «սեպիական, իւրական, բնիկ, առանձնական» (կազմուած է յատ=հատ «կտրել, բաժանել» արմատից՝ -ուկ մասնիկով... (տես ռապ. ati, aati, hati, hahati, hatihati «կտրել, կորել») – գրաբ. հատ (ata) (hat/at) «կտրելը, հատուած, կտոր»), միջին օղակը կազմում է յատուկ «տարբեր», որ մի կողմից նշանակում է «քաժանուած, տարբեր» եւ միւս կողմից «սեփական, իրեն յատուկ»)<sup>107</sup>, «սեփական, իւրայատուկ»<sup>108</sup>,

107 ՀԱԲ, հ. 3, 387:

108 Ա.ՂԱՅԵՑՄԱՆ, Է., Արդի Հայերէմի բացատրական բառարան, Երևան 1976, հ. 1, 54:

2. **Akuaku<sub>2</sub>** (*aku-aku*) «մապատակ, ճգտում» – հայ. հակում(ն) հակում(ն) «որեւէ բանի համար բնածին տուեալ եւ սէր», «ներքին մղում որեւէ բանի նկատմամբ»<sup>109</sup>,
3. **Առու** «պակասորդ», **hanao** «հանել (ցանցից)», **hanohano** (*hanohano*) «սրտխառնոց» – գրաբ. համ- (*han-*) «արմատ առանձին անգործածական, որից են հանել, հանուլ եւն»<sup>110</sup>,
4. **Առու, hamuhamu** (*hamu-hamu*) «ուտել», «ուտել մնացորդները» – գրաբ. համ (*ham*)<sup>111</sup> «ճաշակ ախորժ կամ անախորժ՝ զոր առնուն ճաշակելիքն յուտելեաց եւ յըմպելեաց»<sup>112</sup>, մնկ. ամ (անել) (*am*), համ-համ (*am-ham*) (*ham-ham*) «ուտել»,
5. **Առաչ** բայերի հետ գործածուող մասնիկ – հայ. -անալ (-anal) անորոշ գերբայի վերջաւորութիւնը, տմել (*anel*) «գործել, աշխատանք կատարել», «զրադուել», «պարապել մի բանով»<sup>113</sup>,
6. **Ake** «աւելի, առաւել» – հայ. -ակի (-aki) վերջածանց՝ «անգամ» իմաստով. եռակի (ye'raki) «երեք անգամ», քառակի «չորս անգամ», Գ. Զահուկեանը գտնում է, որ այն ծագում է – ակ ածանցի սեռական-տրական հոլովաձեւից, պատահական է համարում նմանութիւնը յուն. – ակէ, խեր. – առկ ածանցների հետ, եզրակացնում, որ «այն ծագումնարանօրէն դժուար բացատրելի է՝ հնչիւնապէս խոցելի»<sup>114</sup>,
7. **Aaru<sub>2</sub>** (*aaru*) «միացնել բռնակով» – գրաբ. յառեմ (*ha'rem*) «կցել, մերձ կացուցանել, ի վերայ բերել», ըստ ՆՀԲ-ի՝ «ի ճայնէս Առ կամ Յարել, լծորդութիւններից են յեռու (ye'erul) «հիւսել, շարակարգել», յեռ (yef) «շարեալ կից առ միմեանս», յեռու (ye'erum) «ագուցանել, զօրել, յարադրել, շարայրել»<sup>115</sup>,
8. **Ekieki<sub>1</sub>** «հեկեկալ, հեծկլատալ» – հեկեկալ/հեկեկել (*hekekak/hekekel*) «լացի ժամանակ ճայնը կտրուիլը», կրկնաւոր բարդու-

109 ԱՂԱՅԵՆԸՆ, Է., Արդի Հայերէնի բացատրական բառարան, Երևան 1976, հ. 1, 795:

110 ՀԱԲ, հ. 3, 33:

111 Անդ, հ. 3, 16:

112 նոր բառգիրք հայկագեամ լեզուի, 11:

113 ԱՂԱՅԵՆԸՆ, Է., Արդի Հայերէնի բացատրական բառարան, Երևան 1976, հ. 1, 54:

114 ԶԱՀՈՒԿԵԱՆ, Գ., Հիմ Հայերէնի վերջածանցների ծագումնարամական բառարան, 795:

115 նոր բառգիրք հայկագեամ լեզուի, 355:

- թիւն եեկ (hek) պարզ արմատից, որ առանձին չի գործած-լում<sup>116</sup>,
9. **Hag** «շունչ», «շնչել» – հագ (hag) «շունչ», պարզ արմատ, որ առանձին չի գործածլում, որից՝ հագագ (hagag) «ձայն արտաքիրող շունչը»,
  10. **Heguñhegu**, «քարձր ձայնով ծաղրել, հեգնել» – հեկեկալ/հեկեկել (hekekal/hekekel) «ծաղրել, հեգնել»<sup>117</sup>,
  11. **Hiri** «քայլել, գնալ, քարձրանալ» – գրաբ. յառնել (hañel), կտր. յարեայ (harea), հրմ. արի' (ari) «ստքի ելնել, վեր կենալ, կանգնիլ, յարութիւն առնել», յառնեմ (hañem) «արիաքար ի վեր ելանել, կանգնիլ, յոտն կալ, ի վեր երեւել», որից՝ յարուցեալ (haruceal)<sup>118</sup>,
  12. **Haataa** (haa-taa) «միայնակ, մենութիւն» – հայ. հատ (hat) «միատիսակ առարկաներից իւրաքանչիւրը, որպէս մէկ միաւոր»,<sup>119</sup>
  13. **Hahari** (ha-hari) «կատակ, ծաղր» – հայ. հոհուալ (hərhərəl) «քարձրաճայն եւ անզուսպ ծիծաղել, բոքնալ»,<sup>120</sup>
  14. **Hamuhamu** (hamu-hamu), տոնգա համու, մարկիզ. համու, թափ. ամու, համ, հավայ. համու, մարդի համու, մանգ. համու, տոււամ. համու «ուտել» – գրաբ. համ (ham) «նաշակ ախործ կամ անախործ՝ զոր առնուն նաշակելիքն յուտելեաց եւ յըմպելեաց, որակութիւն կամ զգածումն լեզուի եւ բմաց եւ կոկորդաց»<sup>121</sup>, համ-համ (ham-ham anel) մամկ. «ուտել»,
  15. **Hatu**, «խորհուրդ տալ», «հրամայել», «համաձայնել» – րրբ. (Ղըր.) հատրա (hatra) «շատախօս, անիմաստ խօսող»<sup>122</sup>,
  16. **Hirohiro** (hiro-hiro) «խառնել», «լուծել» – րրբ. (Ար., Ղըր.) հար- (har-) «հարել բայի արմատը», տես՝ խնոցի հարել=խառնել (ըստ Ջահուկեանի՝ փոխառութիւն խեթ. harna «շարժել, խառնել, խոռվել»-ից),

116 ԶԱՀՈՒԿԵԱՆ, Գ., Հայերէն ստուգարանական բառարան, 456:

117 Անդ, 456:

118 Նոր բառզիրք հայկագեան լեզուի, 338:

119 ԱՂԱՅԵՆ, Է., Արդի Հայերէնի բացատրական բառարան, Երևան 1976, հ. 1, 837:

120 Անդ, 898:

121 Նոր բառզիրք հայկագեան լեզուի, հ. 2, 11:

122 Հայոց լեզուի բարբառային բառարան, հ. 4, 254:

17. **Horohoro<sub>2</sub>** (horo-horo) «շիել», «տրորել», «ֆերել», «հարել» «շը-փել» – հայ. հարել (harel) «քսուելով մարմինը տրորել՝ մաշկը վիրաւորել»<sup>123</sup>,
18. **Harihari** (hari-hari) «սանրել մազերը» – հայ. հերեթ (herher) «բուրդ գզելու երկարեայ սանտր»<sup>124</sup>,
19. **Hopo** «տագնապ, անհանգստութիւն» «տագնապ բարձրացնել» – գրաբ. հապ- (hap-) «նեպով»<sup>125</sup>, «շտապ, արագ», բաղադրութիւններ՝ հապնեալ, հապշտապ, հապնեալ<sup>126</sup>,
20. **Heguhegus** (hegu-hegu) «վիրաւորուել, զայրանալ», «սրտնելել» – գրաբ. հենգ/հենց (heng/hengn) «ծաղր, հակառակութիւն»<sup>127</sup>, անստոյդ բառ,
21. **Hira** «նայել խորամանկօրէն» – գրաբ. յիրել (hirel) «աչքը մի տեղ յառել»<sup>128</sup>,
22. **Heguigui** (he-gui-gui) «կարդալ», heguhegu<sub>1</sub> (hegu-hegu) «շալ» – գրաբ. հեգ (heg) «վանկ, գրի հնչիւնը», հեգել (hegel) «վանկ կապկա», հագագ (hagag) hagag (hag) «շունչ, ձայնահան», «շնչառութիւն»,
23. **Hiri** «հիւսել (մազերը, պարան)» – հեր (her) «զլիի մազ» (ըստ Գ. Զահուկեանի՝ հազիւ թէ կազ ունենայ հ.-ե. \*ser- «իրար կողքի շարել, կցել» արմատի հետ),
24. **Hiri<sub>2</sub>** «քայլել, գնալ, բարձրանալ» – գրաբ. յառել (hařnel), կոր. յարեայ (hareea), երմ. արի' (ari) «ոսքի ելնել, վեր կննալ, կանգնիլ, յարութիւն առնել», յառելեմ (hařnem) «արիարար ի վեր ելնել, կանգնիլ»,
25. **Hiku<sub>1</sub>**, hiki «պոչ, ագի» – բրբ. (lrb.) հաֆի/հաֆյի «պոչ, ագի»<sup>129</sup>,
26. **Kahi** «նետել կարբը» – գրաբ. կախ (kakh) «կախուած», հ-ով տարբերակը պահպանուած է բրբ. (lrb.) կօհ (koh) ձեւում<sup>130</sup>,

123 ԱՂԱՅԵՆՆ, Ե., Արդի Հայերէնի բացատրակամ բառարամ, Երևան 1976, հ. 1, 844:

124 ՀԱԲ, հ. 3, 87:

125 Նոր բառզիրք հայկազեամ լեզուի, հ. 2, 48:

126 ԶԱՀՈՒԿԵԱՆ, Գ., Հայերէն ստուգարամակամ բառարամ, 447:

127 Անդ, 457:

128 ՀԱԲ, հ. 3, 400:

129 Հայոց լեզուի բարբառային բառարամ, հ. 3, 267:

130 ՀԱԲ, հ. 2, 486:

27. **Kamī** «ուրախութիւն», «գոհ» – գրաբ. կամակ (kamak) «ըստ կամի եղեալ, հանյական, հեշտալի, զուարճալի, քաղցր»,
28. **Ka₃** «արեւածագ», **ka₅** «վառել, բորբոքել», kais «լինել կարմիր (արեւի մասին՝ խաւարման ժամանակ)», karera «փայլել», «վառել լոյսը» – գրաբ. կտոր (kař) «վառում, վառելը» (ծագումն անյայտ է, Գ. Զահուկեանը գտնում է, որ հազիւ թէ հ.-ե. որեւէ լեզուի միջոցով գայ \*ker- «այրել, վառուել, տաքացնել»-ից),
29. **Karu** «սերմ, հատիկ» – գրաբ. կորեակ (koreak) «մի տեսակ հացարյու», յետնարար՝ կորեկ (korek), rppr. (Ագլ.) կարակ (karak)<sup>131</sup>,
30. **Katikati** «հնարել սուտ նորութիւններ» – rppr. (Ղըր.) քար (qat') «խօսք»,
31. **Kato₁** «կտրել, ջարդել (նիւղերը)» – գրաբ. կոտոր (kotor) «կլոտոր» (ըստ Գ. Զահուկեանի՝ հազիւ թէ \*-(s)ker-t- արմատից ծագող որեւէ աղբեկութից՝ \*-rt-ի շրջմամբ կամ, թերեւս, \*(s)keu-t- «կտրել» արմատից),
32. **Kete**, keete «կողով» – կայր (kayt') «կողով. 60 լիտր պարունակութեամբ մի չափ է», ՆՀԲ-ն դիտում է «փրեւ արմատ կրեոյ՝ է կրոց, քրոց»<sup>132</sup>, ինչը մեզ չառ հաւանական է թըռում,
33. **Kore** «չ-», «չհերիթել», kori₂ «չունենալ», «առանց», «չլինել», «պակասել», «քացակայել», «քատարկութիւն» – գրաբ. կոր (kor) «կորուստ, փշցում» (ըստ Գ. Զահուկեանի՝ հազիւ թէ կապ ունենայ հ.-ե. \*gʷer- «կլանել, կոկորդ, անդունդ» արմատի հետ),
34. **Kurukuru** (kuru-kuru), korokoro<sub>2</sub> (koro-koro) «հնդկահաւ» – rppr. (Ար.) կուռկուռ (kurkuř) «հնդկահաւ», կուռար/կոռափ (kuřab/kurář) (Սիբ.) «սգուառ բոչունը»<sup>133</sup>,
35. **Noma** «հիւթեղ, ջրալի» – rppr. (Ար. Թր. Ղըր. Մղր. (Կրճ.) Ռւրմ. Կր. Խոչ. Սս. Վն. Մկա.) նամ (nam) «խոնաւ, քաց», նեմ (nem) (Պլ.), նեամ (neam) (Խըր. (Բլ.) «խոնաւ, քաց»<sup>134</sup>,
36. **Mahatu₂** «սիրտ» – գրաբ. մահասու (mahatu) «սոուօղ զմահ, մահածիր»<sup>135</sup>,

131 ՀԱԲ, հ. 2, 647:

132 Անդ, 505:

133 Անդ, 663:

134 Հայոց լեզուի բարբառայիմ բառարան, հ. 4, 134:

135 Խոր բառզիրք հայկագեամ լեզուի, Վենետիկ 1837, 1364:

37. **Moouu** (տօսոս) «խայծ, հրապուրակեր» – գրաբ. մոյն (տոսոն) արմատ առանձին անգործածական, պահպանուած է միայն ծովամոյն առնել «ծովի մէջ խեղդել» և գետամոյն «գետի մէջ խեղդուած» բառերում «խեղդել» իմաստով<sup>136</sup>,
38. **Naz** «-ից վերջաւորութիւն» – բրր. (Ղրր.) ամա «-ից վերջաւորութիւն», տե՛ս ինձանա «ինձնից», նրանա «նրանից», սրանա «սրանից»,
39. **Paka<sub>1</sub>** «չոր, չոր տեղ, չորանալ», paka, «ներծծել» – հայերէն անյայտ ծագման պակ- (paka-) արմատ,
40. **Pakapaka** (paka-paka) «շատ չոր, անապատ, չորանալ, տապակուել» – գրաբ. պապակ (papak) «խիստ ծարաւ»,
41. **Paka<sub>7</sub>** «կերեւ» – գրաբ. փակ (p'ak) «փակել, ծածկել, գոցել», «փակուած», անյայտ ծագման բառ<sup>137</sup>,
42. **Pipir<sub>2</sub>** «փոքրիկ» – բրր. (Ար., Ղրր., Շմի.) պիծի (pici) «փոքր»<sup>138</sup>,
43. **Pokupoku** (poku-poku) «քանդել, աւերել» – պոկ (pok), պոկել «քաշելով հանել» բայի արմատը, պոկ տալ «պոկել», բրր. պուք- պուք անել կամ պոկան անել «արտը ձեռքով քաղել»<sup>139</sup>,
44. **Pui** «փոս», «անցք», «զրհոր» – բրր. պում «փոս, փոսիկ», անյայտ ծագման փոր «անցք, խոռոչ, դատարկ տեղ, արգանդ»,
45. **Pukou<sub>2</sub>** «վազել» – բրր. (Ար. ՆԶ. Թր. Ղրր.) պուկ (puk) «յանկարծ տեղից պոկուելով փախչելը»<sup>140</sup>,
46. **Putarputa**, գտնում ենք hakaputarputa (haka-puta-puta) «ագահարար ուտել» բառի կազմում – բրր. (Ղրր.) պու՛ տպո՞ւ տ (անել) (pütprüt) «ագահարար ուտել»,
47. **Putiti** (գտնում ենք hakaputiti (haka-pu-titi) «խանձել, մրկել, դաղել, այրել» բառում) – բրր. (Ղրր.) փեռեկ/փութռեկ<sup>1</sup> (փըթռ'թեկ) (p'ut'ot'eł) «սաստիկ այրել (տաք ջրով, կրակով եւել), խանձել/խանձնել»,
48. **Ritorito** «գեղեցիկ, սիրուն» – հայ. բրր. (Պլ. Նկմ. Եվդ. Ար. Տըթ. Հմշ. Մըշ. Զըմ. Աշ. Ղրր. (Գնձ.) Վն.) ոկնտ/ոկնդ (rint/rind) «սիրուն, գեղեցիկ»,

136 ՀԱԲ., հ. 3, 344:

137 ՀԱԲ., հ. 4, 470:

138 Հայոց լեզուի բարբառային բառարան, հ. 5, 72:

139 Անդ, հ. 5, 101:

140 Անդ, հ. 5, 136:

49. **Ta**, *tata* «խփել», *taiat* «խփել, պատժել» – *բրբ.* (Ար. Ղըր. Հմշ. Արբ. (Տըն.)) *տալ* (*tal*) «ծեծել»<sup>141</sup>,
50. **Tanu** «ծածկել հողով», «ցանել, տնկել», *tanugə* «տնկում, տընկելը» – *տումկ/տումգ* (*tunk/tung*) «տնկելու գործողութիւնը (այդու համար ասուած)», «ծառ, բոյս, տնկում»<sup>142</sup>,
51. **Tatake** (*ta-take*) «վէթ, վիթել» – *բրբ.* (Ղըր.) *քակ* *տալ* «ծեծել», *քակ* (*nl*) միակ «կորիւ, ծեծկոտում», *քըկ-քակ* «ծեծ, տփոց», *քակել* «ծեծել»,
52. **Taki<sub>2</sub>** «ձկնորսական ցանցի մերժել մասը» – *գրաբ.* *տակ* (*tak*) «յատակ, տակ, խորի»<sup>143</sup>,
53. **Taki<sub>3</sub>** «նստատեղ» – *բրբ.* (Պլ.) *տակ* (*tak*) «նստատեղը, յետոյիք»<sup>144</sup>,
54. **Take<sub>1</sub>** «արմատ» – *բրբ.* (Վն.) *տակ* (*tak*) «արմատ», գրաբ. *տակոի* (*takoi*) «արմատ կամ արմատի մազմզումը»<sup>145</sup>, *բրբ.* (Ղըր.) *տակեն* «բոյսերի արմատը», *տակոել* (*takfel*) «արմատակալել»<sup>146</sup>,
55. **Tanetane** (*tane-tane*) «ըրնել նաւակը, որ ալիքները չտանեն, չըքշեն» – գրաբ. *տամիլ* (*tamil*) «տանել, փոխադրել»<sup>147</sup>, *բրբ.* *տամել* (*tanel*) «տանել»,
56. **Taru** «արգելք», հաւայերեն *кару* «արգելք» – *բրբ.* (Ղըր.) *կապ* (*kap*) «արգելք, խոչընդոտ»<sup>148</sup>,
57. **Tara<sub>3</sub>** «տեղ» – *գրաբ.* *տարած* (*taraç*) «տարածուող, տարածական»<sup>149</sup>,
58. **Tarai<sub>1</sub>** «առատ անձրեւ, ջրհեղեղ» – *բրբ.* (Ղըր.) *բռն* (*t'or*) «անձրեւ»,
59. **Taki<sub>1</sub>** «կարբարել» – *բռկ* (*t'ok*) «բռկ, չուան»,
60. **Taka** «մուգ կարմիր», «շառագոյն» – *տաք* (*taq*) «բէժ, տապ»,

141 Անդ, հ. 6, 112:

142 ՀԱԲ, հ. 4, 429, ԶԱՀՈՒԿԵՍՆ, Գ., Հայերէն սոուզարամական բառարան, 735:

143 ԶԱՀՈՒԿԵՍՆ, Գ., Հայերէն սոուզարամական բառարան, 718:

144 Հայոց լեզուի բարբառային բառարան, հ. 6, 116:

145 ՀԱԲ, հ. 4, 361, ԶԱՀՈՒԿԵՍՆ, Գ., Հայերէն սոուզարամական բառարան, 718:

146 Հայոց լեզուի բարբառային բառարան, հ. 6, 122:

147 Անդ, հ. 6, 720:

148 Անդ, հ. 3, 41:

149 ԶԱՀՈՒԿԵՍՆ, Գ., Հայերէն սոուզարամական բառարան, 723:

61. **Tau**, «տօնակատարութիւնների գրառումներով տախտակներ», «գրի տեսակ», *tiara* «տառ», «նշան» – հայ. *տառ* (tař) «առանձին հնչիւնի պայմանական նշան՝ պատկեր, գրանշան», «գիր»<sup>150</sup>,
62. **Tehe** «ցոյց տալ» – բրր. (lppr.) *տեհա* (teha) «տեսայ», տեհնալ «տեսնել»<sup>151</sup>,
63. **Tetete** «դողերոցք», «դողալ» – բրր. (lppr.) *թիթիթիթի* (անել) (čit'it'it'i) «մրսել, դողալ»,
64. **Tora**, «կարել» – բրր. (lppr.) *տոա* (top) «կարիլ»<sup>152</sup>, հմննաւել պուտ (put) «կարիլ» (Ար. ՆԲ Թթ. Զրմ. Ղրբ. Ուրմ. Պլ. Նկմ. ՆՆ Եվդ. Սր. Կր. Խոչ. Մլթ. Խրբ. Դրս. (Քղի) Ակն. Արբ. Մշ. Վն. Մկս.),
65. **Ura**<sub>2</sub> «կրակ, բոց, այրուելլը» – գրաբ. *ուռան* (urān) «վառարան կամ աշտանակ» (ըստ Զահոնկեանի՝ հազիւ թէ ծագի հ.-ե. \*սեր- «վառել» *արժատի* ստորին ձայնդարձից` \*-ս- աճականով),
66. **Vaha** «նախ, նախքան, առաջ» – գրաբ. *վահ* (vah) «հին», համարւում է «վաղ» բառի սխալագրութիւն<sup>153</sup>,
67. **Vare**<sub>1</sub> «կրքու ցանկանալ» – գրաբ. *վարար* (varar) «վաւաշոս, շուայսոս (կին)»<sup>154</sup>,
68. **Vere**<sub>2</sub> «դուրս քաշել, պոկել, կորզել», «քաղիանել» – բրր. *վարի* (varil) «փորել, քանդել», «քացել, բաց անել»<sup>155</sup>,
69. **Vero** «շամփիրել, ծափել» – գրաբ. *վէր* (ver) «մարմի վրայ խոց»<sup>156</sup>, *որից*՝ վէրք, *ուսմի*. *վարի* (vari) «ճգել զնենն»,
70. **Vetevete** (vete-vete) «բոյլ» – գրաբ. *վտիս* (vətit), *վատիս* (vatis) «տկար, նիհար, հիւանդկախ»<sup>157</sup>, *ծագումն անյացտ* է, բրր. (Պլ.) *վատել* «նիհարել, հիւծուել»<sup>158</sup> եւ *այլն*:

<sup>150</sup> Ա.Ղ.Ս.ԹԵՆԱՆ, Ե., Արդի Հայերէմի բացատրական բառարան, Երևան 1976, հ. 2, 1412:

<sup>151</sup> Սարգսեան, Ա., Ղարաբաղի բարբառի բառարան, Երևան 2013, 714:

<sup>152</sup> Հայոց լեզուի բարբառայիմ բառարան, հ. 6, 220:

<sup>153</sup> ԶԱՀՈՒԿԵՆԱՆ, Գ., Հայերէմ ստուգարամական բառարան, 702:

<sup>154</sup> Անդ, 706:

<sup>155</sup> Հայոց լեզուի բարբառայիմ բառարան, հ. 6, 35:

<sup>156</sup> ՀԱԲ, հ. 4, 337:

<sup>157</sup> ԶԱՀՈՒԿԵՆԱՆ, Գ., Հայերէմ ստուգարամական բառարան, 715:

<sup>158</sup> Հայոց լեզուի բարբառայիմ բառարան, հ. 6, 27:

Այսպէս՝ ռապանուերէնի եւ միայն բնիկ հայերէն համարուղի բառերի երկպլանային համընկումների բացայալուածթուանակը (մօտ 100) արդէն իսկ բաւարար է՝ բացառելու համար «պատահական համընկումների» մասին վարկածը։ Սակայն առաւել մեծ հետաքրքրութիւն են ներկայացնում բարբառային եւ, այսպէս կոչուած, անյայտ ծագման հայերէն բառերի երկպլանային համընկումները, որոնց թիւը հասնում է 100-ի։ Անհրաժեշտ ենք համարում ընդգծել նաեւ, որ բարբառային համընկումների բացայացման հիմնական աղբիւրը եղել է հայերէնի հնատիպ համարուղի բարբառներից մէկը՝ Ղարաբաղի բարբառը։ Համոզուած ենք, որ հայերէնի այլ բարբառների հետ համեմատութեան փորձերը շատ հետաքրքիր արդիւնքների կը յանդէցնեն, ինչպէս ցոյց է տալիս ռապ. ritorito (rito-rito) «գեղեցիկ, սիրուն» բառի օրինակը, որի հայերէն ոփնու/ոփնդ («գեղեցիկ, սիրուն») տարբերակը գտնում ենք հայերէնի քսանմէկ (Պլ. Նկմ. Եվլ. Սր. Արք. (Տրն.) Հմշ. Մրշ. Զքն. Աշ. Ղրք. (Գնձ.) Վն.) բարբառներում։

### ԼԵՑԼԱ ՍՏԵՓԱՆՅԵԱՆ

## Summary

# RAPANUI – ARMENIAN DUAL SIMILARITIES (Phono-semantic) COMPARISONS AS A DIFFICULT BASIS FOR EXCLUSION OF "ACCIDENTAL SIMILARITIES" APPROACH

LEYLA STEPANYAN

At times H. Adjarian described the linguistic apparent coincidences he had observed between Armenian and Polynesian languages as "casual comparisons". For a reasonable reason (a limited number of sounds), it is possible to assume that in a very random combination of different languages, there are several words in the world that coincide both in form (phonetic plan) and connotation (meaning plan). The limited number of such dual comparisons after which, according to linguists, the likelihood of accidental coincidence is practically equal to zero, as it is to consider of 20-30 or more words.

Due to our long-term research, many Armenian-Polynesian coincidences have been discovered, and to make conclusions about their nature, it is necessary to exclude the version of "random comparisons".

The article presents 160 formal and semantic coincidences discovered between the Oriental Polynesian Language (Easter Island) and the Armenian language, 90 of which are indigenous words and 70 are of unknown origin and dialect. Only Armenian words, which are native to native languages, are already over 3-4 times the acceptable limit, after which it is impossible to speak of "random coincidences".

There is absolute dual-plan (phono-semantic) identity in more than 100 parallels of Rapanui-Armenian lexical similarities, and it is considered that in case of a considerable number (20-30 words) of dual similarities between two or more languages, the likelihood of accidental coincidences is equal to zero.